



**ՊԱՇՏՈՆԸ` ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ, ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ
ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ՂԵԿԱՎԱՐ**

Աշխատանքային պարտականություններ և գործառույթներ

- Ծրագրի շրջանակներում սահմանում է ճանապարհաշինարարական ոլորտում պետություն-մասնավոր հատված համագործակցության ձևաչափը,
- կատարում է ճանապարհների և հարակից հատվածների սպասարկման ստանդարտների ձևավորում,
- ծրագրի շրջանակներում կազմակերպում է միջոցառումներ ուղղված ճանապարհների կառավարման քաղաքականության մշակմանն ու իրականացմանը,
- աջակցում է միասնական ճանապարհային ռեգիստրի ստեղծմանը և կառավարմանը,
- աշխատում է ճանապարհային ակտիվների կառավարման համակարգի զարգացման ուղղությամբ,
- աջակցում է ճանապարհաշինության և հարակից ոլորտների մասնագետների վերապատրաստման ծրագրի ստեղծմանը` համագործակցելով ոլորտի կազմակերպությունների և տեխնիկական ուղղվածություն ունեցող տեղական կրթական հաստատությունների հետ,
- ծրագրերի շրջանակներում ապահովում է միջազգային դոնոր կազմակերպությունների և այլ արտաքին շահառուների հետ հարաբերությունների պահպանումը և համագործակցության խորացումը,
- վարում է բանակցություններ դոնոր կազմակերպությունների հետ` լրացուցիչ ֆինանսավորում ներգրավելու վերաբերյալ,
- ձևավորում է պահանջներ արտաքին խորհրդատվության մասով,
- ձևավորում է պահանջներ ճանապարհաշինության ոլորտում կարողությունների զարգացման վերաբերյալ,
- վերահսկում է հանրային կապերի և հաղորդակցության մասնագետի աշխատանքը և ղեկավարում հանրային կապերի և հաղորդակցության գործառույթը,
- վերահսկում է մոնիթորինգի և գնահատման մասնագետի աշխատանքը և ղեկավարում մոնիթորինգի և գնահատման գործառույթը,
- վերահսկում է տեղեկատվական տեխնոլոգիաների և վեբ-կայքի ղեկավարման մասնագետի աշխատանքը և ղեկավարում համապատասխան գործառույթը,
- կատարում է թարգմանչական աշխատանքների կոորդինացումը և ղեկավարում թարգմանչի աշխատանքը,
- կատարում է գործառույթից բխող և/կամ վարկային և ծրագրի համաձայնագրերում և այլ ծրագրային փաստաթղթերում նախատեսված այլ հանձնարարություններ,
- կատարում է Գլխավոր գործադիր տնօրենի այլ առաջադրանքներ:

Իմացություն և որակավորում`

- բարձրագույն կրթություն (տնտեսագիտական, ճանապարհաշինության կամ դրան առնչվող ոլորտներում` դիտարկվելու է որպես առավելություն),
- առնվազն 5 տարվա փորձառություն հանրային և/կամ մասնավոր ոլորտների նմանատիպ զարգացման ծրագրերի ոլորտում,
- միջազգային կազմակերպությունների հետ աշխատելու փորձառություն,

- **FIDIC** տեսակի պայմանագրերի իմացություն և փորձառություն (դիտարկվելու է որպես առավելություն),
- գերազանց հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուների իմացություն (գրավոր և բանավոր),
- ծանոթություն միջազգային կազմակերպությունների ընթացակարգերին (հատկապես՝ Ասիական Չարգացման Բանկ, Համաշխարհային Բանկ, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ, Եվրոպական ներդրումային բանկ, Եվրասիական զարգացման բանկ և այլ դոնոր կազմակերպություններ),
- համակարգչային գիտելիքներ (առնվազն **Word, Excel, PowerPoint, AutoCAD, Microsoft project** կամ նմանատիպ այլ ծրագիր):

Մասնագիտական հմտություններ՝

- գերազանց վերլուծական և ներկայացման հմտություններ,
- դիվանագիտական և բանակցային հմտություններ,
- ինդիքների լուծման և արագ որոշումներ կայացնելու հմտություններ,
- պլանավորման և կազմակերպչական հմտություններ,
- համագործակցող/թիմակից,
- արտագնա աշխատանքային այցեր կատարելու պատրաստականություն,
- արտաժամյա և լարված ռեժիմով աշխատելու ունակություն:

Աշխատանքի պայմաններ և դրույթներ՝

- Աշխատանքի պայմաններն ու դրույթները կառավարվում են ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ քաղաքականությամբ և ընթացակարգերով և աշխատանքային պայմանագրով: